ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԳՐԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ՝ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18.03.2016 15:25

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում քննության է առնվել է Հմայակ Խալաֆյանի, Անահիտ Վարդանյանի, Վարդան Խալաֆյանի, Անի Խալաֆյանի անհատական դիմումը, որով վիճարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթի և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցը:

Նշված գործով ՀՀ փաստաբանների պալատը 2016 թվականի մարտի 17-ին, որպես երրորդ կողմ, ՀՀ սահմանադրական դատարանին վիճարկվող իրավական նորմերի վերաբերյալ ներկայացրել է Amicus curiae (ամիկուս կուրիա), այսինքն՝ գրավոր մեկնաբանություն, երրորդ կողմից կարծիք:

ՀՀ փաստաբանների պալատի կարծիքում վիճարկվող իրավակարգավորումները դիտարկվել են ՀՀ սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի և խտրականության արգելքի սկզբունքի լույսի ներքո, ինչպես նաև ներկայացվել է խնդրո առարկա նորմերի վերաբերյալ միջազգային իրավական կարգավորումները:

Նշված անհատական դիմումը ՀՀ սահմանադրական դատարանը քննելու է գրավոր ընթացակարգով՝ 2016 թվականի մարտի 29-ին, ժամը 10:00-ին (Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի ժամանակացույցը):

ՀՀ փաստաբանների պալատի գրավոր մեկնաբանությանը կարելի է ծանոթանալ այստեղ:

Առաջարկվող նորություններ

24.10.2013«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՄՈԿԿ ՆԱԽԱԳԱՀ Է.ՄԱՆԵՎԻԴԻՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

24.10.2013
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՑ ԽԼՈՒՄ ԵՆ 82 ՄԻԼԻՈՆ



24.10.2013ԸՆԴԵՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈՒՐՔԻ

16.10.2013
ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })